Հավելված N 21
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղարի
2020թ. օգոստոսի 11-ի N 532-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Ռազմարդյունաբերության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ռազարդյունաբերական համալիրի զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 24-1-21.4-Մ2-2)

(1.1.-րդ կետը փոփ. 07.09.20 գլխավոր քարտուղարի հր. 639-Ա)

1.2. Ենթակա և հաշվետու է
Վարչության գլխավոր մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:
1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Վարչության գլխավոր մասնագետի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս գլխավոր մասնագետը կամ ավագ մասնագետը:
1.4. Աշխատավայրը
Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ. Սարգսյան 3/3

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

Գործառույթներ՝

1) իրականացնում է ռազմարդյունաբերության ոլորտում նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական բազայի վարման աշխատանքները.
2) Իրականացնում է ՀՀ ռազմարդյունաբերության և ռազմատեխնիկական պետական քաղաքականության կենսագործման համար նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական ակտերի ու փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքները.
3) իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում առկա՝ ռազմարդյունաբերությանն առնչվող տեխնոլոգիաների հաշվառման, համապատասխան բազայի ստեղծման ու վարման աշխատանքները.
4) իրականացնում է ՌԱՀ-ի ինժեներատեխնիկական, գիտատեխնիկական և միջին մասնագիտության մասնագետների պատրաստման ծրագրերի խթանման աշխատանքները.
5) իրականացնում է Կոմիտեի համակարգում միասնական գիտատեխնիկական քաղաքականության իրականացման նախագծերի մշակման աշխատանքները.
6) իրականացնում է ՌԱՀ-ի գործունեությունը կարգավորող ու համակարգող կարգերի նախագծերի մշակման աշխատանքները.
7) մասնակցում է ՌԱՀ-ի կադրերի պատրաստման պետական ծրագրերի մշակման և համապատասխան պետական պատվերների ձևավորման աշխատանքներին.
8) իրականացնում է ՌԱՀ-ի միասնական տեղեկատվավերլուծական համակարգի մշակման, ներդրման աշխատանքները:
9) Կազմակերպում է սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական միջոցների պետական պատվերի (ներհանրապետական գնումներ, նորոգման, արդիականացման աշխատանքներ) ու դրա ձևավորման կարգի նախագծի մշակման աշխատանքները.
10) իր իրավասության սահմաններում իրականացնում է սպառազինության, ռազմական և հատուկ տեխնիկայի զարգացման ու պահպանման, ռազմարդյունաբերության, ռազմատեխնիկական համագործակցության նախագծերի մշակման և իրականացման, ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին պետական աջակցության ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքները.
11) Մասնակցում է Կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական գործի պլանավորմանը.
12) իրականացնում է սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության ու նորոգման համար արտադրական հզորությունների ստեղծմանն ուղղված պետական ներդրումների ներգրավման

միջոցառումների մշակման և իրականացման աշխատանքները:

Իրավունքները՝

1) ստանում է ռազմարդյունաբերության ոլորտում նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական բազայի վարման առաջադրանք.
2) գործուղվում է համապատասխան զինվորական զորամասեր.
3) Ստանում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերության և ռազմատեխնիկական պետական քաղաքականության կենսագործման համար նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական ակտերի ու փաստաթղթերի նախագծերի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվություն.
4) ստանում է Հայաստանի Հանրապետությունում առկա՝ ռազմարդյունաբերությանն առնչվող տեխնոլոգիաների հաշվառում և համապատասխան բազայի ստեղծման ու վարման վերաբերյալ տեղեկատվություն.
5) ստանում է ՌԱՀ-ի ակազամակերպություններից ինժեներատեխնիկական, գիտատեխնիկական և միջին մասնագիտության մասնագետների պատրաստման ծրագրերի խթանման վերաբերյալ տեղեկատվություն.
6) ստանում է Կոմիտեի համակարգում միասնական գիտատեխնիկական քաղաքականության իրականացման նախագծերի վերաբերյալ տեղեկատվություն.
7) ստանում է ՌԱՀ-ի կադրերի պատրաստման պետական ծրագրերին առնչվող տեղեկատվություն.
8) ստանում է ՌԱՀ-ի միասնական տեղեկատվավերլուծական համակարգի մշակման և ներդրման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն.
9) ստանում է ՌԱՀ-ի միասնական տեղեկատվավերլուծական համակարգի մշակման, ներդրման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն :
10) ստանում է սպառազինության, ռազմական և հատուկ տեխնիկայի զարգացման ու պահպանման, ռազմարդյունաբերության, ռազմատեխնիկական համագործակցության նախագծերի մշակման և իրականացման, ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին պետական աջակցության ծրագրերի նախագծերի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվություն.
11) Ստանում է սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության ու նորոգման համար արտադրական հզորությունների ստեղծմանն ուղղված պետական ներդրումների ներգրավման միջոցառումների մշակման և իրականացման համար առկա տեղեկատվություն:

Պարտականություններ՝

1) ուսումնասիրում և մշակում է ռազմարդյունաբերության ոլորտում նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր.
2) Իրականացնում է անհրաժեշտ մասնագետի ընտրությունը՝ նորոգման ենթակա տեխնիկայի սպասարկմն նպատակով.
3) մշակում և ներկայացնում է հաստատման Հայաստանի Հանրապետությունում առկա՝ ռազմարդյունաբերությանն առնչվող տեխնոլոգիաների հաշվառման կարգը սահմանելու մասին նախագիծ և ստեղծում է տեխնոլոգիաների հաշվառման համապատասխան բազա.
4) ՌԱՀ-ի կազմակերպությունների հետ քննարկումների արդյունքում մշակում և հաստատման է ներկայացնում ինժեներատեխնիկական, գիտատեխնիկական և միջին մասնագիտության մասնագետների պատրաստման ծրագրեր.
5) ուսումնասիրում և ներկայացնում է առաջարկություններ Կոմիտեի համակարգում միասնական գիտատեխնիկական քաղաքականության իրականացման նախագծերի վերաբերյալ.
6) նախապատրաստում և հաստատման է ներկայացնում ՌԱՀ-ի գործունեությունը կարգավորող ու համակարգող կարգերի նախագծերը.
7) մշակում և հաստատման է ներկայացնում ՌԱՀ-ի կադրերի պատրաստման պետական ծրագրեր.
8) մշակում է ՌԱՀ-ի միասնական տեղեկատվավերլուծական համակարգեր.
9) իր իրավասության սահմաններում համակարգում է սպառազինության, ռազմական և հատուկ տեխնիկայի զարգացման ու պահպանման, ռազմարդյունաբերության, ռազմատեխնիկական համագործակցության նախագծերի մշակման և իրականացման, ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին պետական աջակցության ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքները.
10) սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության ու նորոգման համար արտադրական հզորությունների ստեղծմանն ուղղված պետական ներդրումների ներգրավման միջոցառումների մշակման աշխատանք իրականացում.

11) տեխնիկական փաստաթղթերի հավաքման ու հաշվառման աշխատանքներն իրականացնելու համար ծանոթանում և ուսումնասիրում է հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների, փորձանմուշների, ներհանրապետական արտադրանքի տեսականուն.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը
Բարձրագույն կրթություն
3.2. Մասնագիտական գիտելիքները՝
Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:
3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը
Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ տնտեսագիտության բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ
Ընդհանրական կոմպետենցիաներ՝
1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝
1. Փոփոխությունների կառավարում
2. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ
4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը
Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: